600.0075.18.03.20

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 մարտի 2020 թվականի №75Ա
ք. Երևան

### «ՀՐԱԶԴԱՆԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ՀՐԱԶՋԷԿ)» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) 2014 թվականի հունիսի 25-ի №207Ա որոշմամբ հաստատված հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ սահմանված լրացուցիչ պահանջների կատարման մոնիթորինգի կարգի համաձայն՝ իրականացրած «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից 2019 թվականի 2-րդ եռամսյակում կայացած ՀՁ-ԲՄԸ-ԱՊՁԲ/ԲԿևԽ-05/27.03.19-ԱՄ ծածկագրով «Ամառային բանվորական արտահագուստ կոստյում 440 լրակազմ» (այսուհետ՝ №1 գործարք), «Բանվորական խալաթ 80 հատ» (այսուհետ՝ №2 գործարք) և ՀՁ-ԲՄԸ-ԱՊՁԲ/ՓԻ-09/14.05.19-ԱՄ ծածկագրով «Փայլաթիթեղով 4մմ հաստությամբ 730 քառ.մ իզոգամ» (այսուհետ՝ №3 գործարք) գործարքների մոնիթորինգի արդյունքում պարզվել է, որ.

- №1 գործարքի, №2 գործարքի և №3 գործարքի դեպքերում նախքան մրցույթի հայտարարումը, Ընկերությունը չի կատարել շուկայի ուսումնասիրություն,
- №3 գործարքի կազմակերպման մասին հայտարարությունը չի տեղադրվել Ընկերության պաշտոնական կայքում,

- №1 գործարքի և №2 գործարքի դեպքերում բաց մրցույթի հայտերի ներկայացման ժամկետ է սահմանվել 14 օրը, այնինչ Ընկերության գնումների կարգով բաց մրցույթի հայտերի ներկայացման ժամկետ սահմանված է առնվազն 40 օր (բացառությամբ արտակարգ կամ չնախատեսված իրավիճակի առաջացման հետևանքով ծագած գնման անհետաձգելի պահանջի առաջացման դեպքերի),

բ) 2020 թվականի փետրվարի 17-ից Ընկերության նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ՝ Հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 13-ի №391Ա որոշմամբ սահմանված հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ լրացուցիչ պահանջների (այսուհետ՝ Լրացուցիչ պահանջներ) հնարավոր խախտումների փաստի ուսումնասիրության նպատակով,

գ) Ընկերությունը հարուցված վարչական վարույթի շրջանակում 2020 թվականի փետրվարի 25-ի №44 գրությամբ հայտնել է, որ 2019 թվականի նոյեմբերի 27-ի №195 գրությամբ արդեն իսկ ներկայացրել է իր դիրքորոշումը՝ փաստելով, որ.

- շուկայի ուսումնասիրություններ կատարվել են, և առկա են համապատասխան գրություններ,
- Ընկերության պաշտոնական կայքում №3 գործարքի մասին հայտարարության տեղադրված չլինելը պայմանավորված է եղել տեխնիկական խնդիրներով,
- Ընկերության գնումների կարգի 14.2.2 կետը թույլատրում է բաց մրցույթը կազմակերպել 15 օրում:

դ) Լրացուցիչ պահանջների 2-րդ կետի համաձայն՝ հանրային կազմակերպությունները գնումները կազմակերպում և իրականացնում են համաձայն իրենց կողմից հաստատված գնումների կարգերի՝ ինքնուրույն, առանց կողմնակի կազմակերպությունների ներգրավման,

ե) Լրացուցիչ պահանջների 13-րդ կետի համաձայն՝ անկախ որևէ հանգամանքից, գնումների պլանի կազմման նպատակով, հանրային կազմակերպությունները պետք է կատարեն շուկայի ուսումնասիրություններ, որոնց արդյունքները (ոչ վաղ, քան նախորդող օրացուցային տարում իրականացված) պետք է գրանցվեն ընկերության կողմից և դառնան գնման վերաբերյալ փաստաթղթերի անբաժանելի մաս,

զ) Լրացուցիչ պահանջների 14-րդ կետի համաձայն՝ հանրային կազմակերպությունների կողմից հաստատված գնումների կարգերը, գնման գործընթացների կազմակերպման մասին հայտարարությունները, հրավերները, գնումների բազային միավորը (մեկ մլն դրամ) գերազանցող՝ կնքված պայմանագրերի մասին հայտարարությունները տեղադրվում են պաշտոնական կայքում և հրապարակվում «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հրատարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով գործող ինտերնետային կայքում,

է) Հարուցված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Լրացուցիչ պահանջների 2-րդ, 13-րդ և 14-րդ կետերը՝ նախքան №1 գործարքի, №2 գործարքի և №3 գործարքի վերաբերյալ մրցույթների հայտարարումը շուկայի ուսումնասիրություն չի կատարել, իր պաշտոնական կայքում չի հրապարակել №3 գործարքի վերաբերյալ հայտարարություն, №1 գործարքի և №2 գործարքի պարագայում սահմանել է բաց մրցույթի հայտերի ներկայացման ավելի կարճ ժամկետ, քան նախատեսված է իր գնումների կարգով: Ինչ վերաբերում է Ընկերության հիմնավորումներին, ապա ներկայացված փաստաթղթերը որպես շուկայի ուսումնասիրություն ընդունելի չեն, քանի որ որպես այդպիսին №1 գործարքի և №2 գործարքի մասով ներկայացվել են 2018 թվականին «բանվորական արտահագուստ» ապրանքի ձեռքբերման հաշիվ ապրանքագրեր, և չի պարզաբանվել դրանց առնչությունը հայտարարված մրցույթներին, իսկ №3 գործարքի մասով՝ ներկայացվել է մեկ կազմակերպության կողմից տրամադրված «2019 թվականի գնացուցակ» վերտառությամբ գրություն, որը կնքված կամ ստորագրված չէ, և այդ առնչությամբ ևս Ընկերության կողմից որևէ պարզաբանում չի ներկայացվել: Միաժամանակ, Ընկերության պաշտոնական կայքում №3 գործարքի մասին հայտարարությունը ընկերության վերահսկողության ներքո չգտնվող տեխնիկական խնդիրների պատճառով տեղադրված չլինելը չի հիմնավորվել, իսկ Ընկերության գնումների կարգի 14.2.2 կետը թույլատրում է բաց մրցույթը կազմակերպել 15 օրում արտակարգ կամ չնախատեսված իրավիճակի առաջացման հետևանքով ծագած գնման անհետաձգելի պահանջի առաջացման

դեպքերում, որպիսին հարուցված վարչական վարույթի շրջանակում չի հիմնավորվել,

և հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Լրացուցիչ պահանջների 2-րդ, 13-րդ և 14-րդ կետերի խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:
2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝** **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
18 մարտի 2020թ.